Դավիթ Բեկ

Բնակչություն՝ 747

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 25 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1100 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Դավիթ Բեկ գյուղը (նախկինում՝ Զեյվա, վերանվանվել է 1949թ.) հիմնվել է 18-րդ դ. Դավիթ Բեկ Զորավարի ցուցումով՝ Ղարաբաղից տեղափոխված մի քանի ընտանիքների կողմից, որտեղ 19 դ. տեղափոխվել են նաև շրջակա Տախ, Ենկիճա, Փակահան, Ակն, Խաթուն, Բաղ գյուղերի բնակիչները:
Գյուղում 1915թ. ապաստան են գտել Վասպուրականից ներգաղթած մի քանի ընտանիքներ: Գյուղի շրջակայքում կան հին գերեզմանոցներ, 17-րդ դարի եկեղեցիների ավերակներ և բնակատեղիներ: 1866թ. գյուղում կառուցվել է սբ Ստեփանոս եկեղեցի: Գյուղում 1928թ. կազմակերպվել է կոլտնտեսություն, որը 1991-ին լուծարվել է:
Դավիթ Բեկը 1919-21թթ. Գարեգին Նժդեհի գլխավորությամբ ակտիվ պայքարել է թուրքական և ռուս-թուրքական բանակների դեմ: Որպես սահմանամերձ գյուղ 1991-93թթ. հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում մեծ դեր էր ունեցել սահմանների պաշտպանության գործում, զգալի տուժել է հրետակոծությունից:
Դավիթ Բեկում է ծնվել Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ Արամ Մանուկյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 2002 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 844հա, որից՝
- վարելահող՝ 409 հա, բազմամյա տնկարկ՝ 9 հա, խոտհարք՝ 2 հա, արոտ՝ 76 հա, այլ հողատեսք՝348 հա
- բնակավայրերի հողեր՝ 110 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 25 հա

- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝3հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝25հա,
- անտառային հողեր՝ 993հա, որից անտառածածկ՝ 963հա
- ջրային հողեր՝ 2 հա